ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1

ք.Երևան «30» « 11 » 2018թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 21.05.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, կապված համաներման հետ, էական նվազել է, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ 4-րդ եռամսյակի ընթացքում, մատակարարման ենթակա 20000 կգ «ճակնդեղ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 6500 կգ, որի գումարը կազմում է՝ 584805 ( հինգ հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր հինգ) ՀՀ դրամ, քանի որ նշված քանակի չափով վերացել է «ճակնդեղ» ապրանքատեսակի գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Պայմանագրի գինը՝ նվազեցումից և 16.11.2018թ.-ին միակողմանի մասնակի լուծումից հետո, կազմում է 5915441,46 (հինգ միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր քառասունմեկ ամբողջ 46) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 6-րդ չափաբաժնի սյունակը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 և N2 հավելվածները կազմված են 5 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա. Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056

Տնօրեն՝
Ա. Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*« 30 » « 11 » 2018 թ. կնքված*
*N 3 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ 6-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 6 | 15331163/1 | ճակնդեղ | ՀՀ | Ճակնդեղ՝ կարմիր բազուկ, 1-ին կարգի: Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր երանգի: Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 6-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ-ից ոչ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%: Մատակարարի նախաձեռնությամբ փաթեթավորման դեպքում՝ մինչև 50 կգ ցանցի պարկերով: | կգ | 89.97 | 1844385 | 20500 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 20500 | 2018թ.<br>3-րդ եռամսյակ 7000կգ<br>4-րդ եռամսյակ 13500կգ<br>եռամսյակների ընթացքում, ոչ ուշ մինչ 15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀօրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների: | | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Միխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056

Տնօրեն՝
Ա. Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ

*«30» «11» 2018 թ. կնքված*
*N 3 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 1 | 03222132/1 | դեղձ | - | - | - | - | - |
| 2 | 03222134/1 | սալոր | - | - | 900000 | 900000 | 900000 |
| 3 | 03221120/1 | բիբար | - | - | 793686.6 | 793686.6 | 793686.6 |
| 4 | 03221121/1 | պոմիդոր | - | - | 433563.12 | 433563.12 | 433563.12 |
| 5 | 03221124/1 | վարունգ | - | - | 745824 | 745824 | 745824 |
| 6 | 15331163/1 | ճակնդեղ | - | - | 629790 | 1844385 | 1844385 |
| 7 | 15331168/1 | սմբուկ | - | - | 1197982.74 | 1197982.74 | 1197982.74 |
| | Ընդամենը | | | | | | 5915441.46 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056

Տնօրեն՝
Ա. Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ